

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ


Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Իրիւն թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱԲԹԻ ԵԻ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НА ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեմ տրոշիր

Երանցիկան տրոշիր
20 ամսիկով

ՇԱՐԺԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Կովկաս ապաստանած ճաճկա-
հայ գաղթականներուն հայրենիք
վերադարձին խնդիրը դեռ վրդ-
վեցուցիչ անորոշութեան մը մէջ
կը մնայ: Այդ 40000 հայերը
թուրքը ներս չընդունիր, իսկ ռուս
կառավարութիւնը անոնց վերա-
դարձը անուղղակի միջոցներով
կարգիլէ, ստիպելու համար զա-
նոնք որ ռուսական, բառին ըն-
դարձակ առումովը, քննելով Ռու-
սիոյ ներքին նահանգները: Ի
սկզբան հայ գաղթականներուն
վերադարձին համար մէկէ աւելի
գիմուսներով միջոցներ ներդրող
ռուս կառավարութիւնը ժամանա-
կէ մը ի վեր իր այդ պահանջն
հրաժարելէ զատ, գոնէ ազատ չը
ձգեր հայերը որ իրենք իրենց
գլխուն ճարը նային: Կը հաւատ-
տեն թէ գաղթականաց վերադարձին
օգնելու նպատակաւ Կովկասի մէջ
հայրէ հանգանակուած 35-40,000
յուզին իշխան կալիքին գրաւած է
և ետ ստանալու համար վիհ. Կա-
թողիկոսին գիմուսները ապարդիւն
մնացած են: Այս պարագաները
կուգան հաստատուի անցեալ օր
Հայ Հանդէսի մէջ կարգացուած
այն տեղեկութիւնը թէ կոտորած-
ներէ ազատուած այդ 40,000 հայ
գաղթականաց վերադարձին հա-
կառակող ռուս և թուրք կառա-
վարութեանց միջեւ գաղտնի հա-
մաձայնութիւն մը գոյացած է:
Այս անհունապէս ցաւալի լուրին
հաւատալը որչափ կը դառնացնէ
մեր հոգին, նոյնչափ կը սթափեցնէ
մեր միտքը. ասով մեր մտքին մէջ
հարց կը ծագի թէ այդ երկու
բացարձակ միապետութիւնները ի-
րաւունք ունին ազատօրէն հա-
մաձայնութիւն մը գոյացնելու ի-
րենց մէջ՝ 40,000 հայ եւս հայու-
թենէ անհետացնելու նպատակաւ:
Թէ՛ հայ ժողովուրդին բաղդը վրձ-
ռել միայն թուրքին և ռուսին
կամքին ձգուած է: Յայտնի է թէ
դաշնագիրները ուրիշ հինգ մեծ
պետութիւններու ևս Ռուսիոյ հա-
մահաւասար իրաւունքներ տուած են
մեզ պաշտպանելու:

Արտասահմանի հայութիւնը՝ որ
սահմանադիւր իր եղբայրներուն
նպաստ հասցնելու համար վերջիս
մի քիչ շարժիլ սկսաւ, արդեօք
օգտակաւ, չը նկատե՞ր եւրոպական
միւս պետութեանց միջամտու-
թիւնը խնդրել, որ ասոնք Սուլ-
թանը ստիպեն երկրին այդ տա-
րագրուած բնիկ տարրը ազատ
ձգելու որ իրենց տունները վերա-
դառնան:

Բոս Արմէնիայի խմբագրապետ
Տ. Բիւն Գիյոսը իր ընկերներով
թէեւ դիմում մը ըրաւ Ֆրանսայի
արտաքին գործոց նախարարին որ
Պարսից Շահէն թոյլտուութիւն
խնդրէ հայերը Պարսկաստան ըն-
դունելու: Բայց կը հաւատեն թէ
Շահը չէ հաճած: Մենք կը կար-
ծենք որ շատ օգտակար կրնայ
ըլլալ, եթէ հաւաստապէս հինգ
մեծ պետութեանց հաւաքական
գիմուսներ ըլլան, ոչ թէ Շահէն
հիւրընկալութիւն մը խնդրելու,
այլ նոյնիքն Սուլթանէն պահան-
ջելու որ հայ գաղթականները իրենց
տեղերը ընդունին:

Մակեդոնական խնդրով պետու-
թեանց ուշադրութիւնը գէպ Արեւ-
ելք դարձած այս միջոցիս, յար-
մարագոյն առիթը ըլլալ կը կար-
ծենք հայ գաղթականներու վերա-
դարձը խնդրել ընելով, հայկական
հարցն ալ կանաչ եղանակներու վրայ
գնիլ տալ:

Ուր մնացին, ի՞նչ առիթներու
կապասն լոնտրայի Անգլո-Հայկա-
կան ընկերութեան հոշակաւորան-
դամները: Ի՞նչ կը գործեն այդ
անգլիական ոստանին մէջ բնակող
հայ հայրենասէրները: Ի՞նչու չեն
շարժիր ու շարժեր քանի մը տարի
առաջ խորհրդարանին մէջ հոյա-
կապ ճառեր արտասանող մեր
պաշտպանները: Տէյլի Նիշը, Տէյլի
Կրօնիքը և ուրիշ հայասէր թեր-
թեր հիմակ ինչու բողոքովին լու-
կը մնան, մինչ առաջ կոկորդին
կը պատուէին մեզ համար:

Կը կրկնենք, անշարժութենէ
սթափուելու, գործելու ժամանակն
է, յարմար առիթն է: Եւրոպիոյ
զանազան կեդրոններու մէջ գըտ-
նուող հայրենասէր հայ խըմ-
բակներ ու հայասէրներ պէտք է

նորանոր գիմուսներ ընեն Հայոց
ապահովութիւնը երաշխաւորող պե-
տութիւններուն, մամուլին ու մար-
դասէր նշանաւոր անձնաւորու-
թեանց:

ԳՈՒՐՄԷԹ

ՕՐՈՒՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

(Թաւ իր վերջին թիւերէն մէկուն
մէջ Մակեդոնիոյ հրատապ խնդրոյն
վրայ հետեւեալ հոյակապ խմբագրա-
կանը կը նուիրէ):

Սամանեան կայսերական կառավա-
րութիւնը հերքել տուաւ իր զօրագուն-
դերուն մէկ կարեւոր մասին եւրոպա-
կան թուրքիոյ մէջ շարժման վիճակի
դրուելու լուրը: Այս հերքումը, որ-
քան զարմանալի ալ ըլլայ, հանդէպ
ոչ միայն արեւմտեան մամուլին բոլոր
օղակներուն միաբան տեղեկու-
թեանցը, այլ նաեւ Բ. Դրան անվի-
ճելի կերպով ձեռք առած կարգ մը
միջոցներուն առջեւ, կը հասկցուի թէ
միջազգային քաղաքավարութիւնը թոյլ
չտար որ զայն վէճի ենթարկենք:

Բայց նոյն քաղաքավարութիւնը
կարծենք ու տեղեկական խաղաղու-
թեան շահը կը պահանջէ որ նկատի
առնենք այս յայտարարութիւնը՝ ուր
եւրոպան չէ կարող բարոյական տե-
սակ մը յանձնառութիւն չտեսնել:

Արդէն, նախորդ տարին, ինչպէս
Դիւրին Գիրքը ցոյց կուտայ, Ապրիլ
ամսուն, Մ. Տէլքասէ հարկ համարեց
օգտուելու ու օգտուեցաւ շատ ճարպի-
կութեամբ դեսպան Միւնիխի պէյի մէկ
զեկուցումէն, ուր Բ. Դրանը կը պն-
դէր որ պաշտպանութեանը ու բոլոր
միւս անկանոն զօրագունները մէկգի
գնելով, կանոնաւոր զօրքերով մի-
այն պիտի գործէր:

Այս ժամուս, աւելի քան բնաւ ան-
հրաժեշտ է շիջողուլ որ, կարգապա-
հութեան պատրուակին ներքեւ, չա-
րիքներու նոր ամպրոպ մը այդ տա-
րաբախտ նահանգներուն վրայ խոյա-
նայ: Մարդկութիւնը աներկբայ պիտի
տոգուենէր 1894ի, 1895ի ու 1896ի
գէպքերուն այս վերսկսումէն. այնպէս
որ, յիմարութիւն կըլլար երեւա-
կայել թէ այդ առթիւ գալիք հետե-
ւանքները սարսփելի պիտի չլլային
ամենէն առաջ այն վարչութեան հա-
մար՝ որուն մէջ այս կերպ տեսարան-
ներ կարող են իրարու յաջորդել:

Որքան աւելի պետութիւնները հոգ
կը տանին-իրաւամբ-Պալքանեան թե-

րակզդիին մէջը խաղաղութիւնը պահ-
պանելու, այնքան աւելի կարեւոր է
որ անոնք ամէն գնով առաջը առնել
աշխատին այնպիսի պատահարներու,
որոնք խաղաղութեան պահպանումը
անկարելի պիտի ընէին:

Ամէն բան ցոյց կուտայ թէ զէնքով
եղած զսպողական գործունէութիւն մը
իբր անխուսափելի հետեւանք պիտի
ունենար նախ կոտորածները, որոնք
եւրոպական խղճմանքին մէջ պիտի
գտնէին խորունկ ու անմիջական ար-
ձագանգ մը: Երկրորդ, պատերազմ մը
Պուլկարիոյ հետ, որը արեւմտեան
դաշիններուն առաջը պիտի գնէր ա-
մենէն փափուկ ու կնճառտ խնդրե-
ները:

Հայաստանի ջարդերէն վերջ եւրո-
պական միաբանութեան ողբալի տկա-
րութեանը հակառակ, ոչ ոք իրա-
ւունք չունի բարոյական նոյնպիսի
անանկութիւն մը նախատեսել այն
պարագային՝ երբ արեւելք յորդառատ
Մակեդոնիոյ մէջ հոսի:

Գալով պուլկար փոքրիկ իշխանա-
պետութեան ու թուրքիոյ միջեւ պա-
տերազմի մը պատահականութեանը,
նախ հասկնալ պէտք է թէ, չնայե-
լով իշխան Ֆերիտիւնի կառավա-
րութեան բոլոր բարեացակամութեանը
ու հլուութեանը, անոր կողմէ պետու-
թեանց ըլլալիք զոհողութեանց մէկ
սահմանը կայ: Թէ, համարաշխու-
թիւնը որ կը տիրէ պուլկար ժողովրդ-
դին ու Մոնաստեր, Սէլանիք վիլա-
յէթներուն, ինչպէս Գոսովայի մէկ
կարեւոր մասին ժողովուրդներուն մի-
ջեւ, սեղմ է ու հիմնուած արիւնով,
պատմութեամբ, կրօնքով, շահերով,
ըղձանքներով: Թէ, յանգնելով ա-
րեւելեան ինքնին իր ազգայնութեան
ուրացումը, իր պարտականու-
թեանցը ու փառասիրութեանցը դա-
սալքութիւնը պահանջելու, արեւ-
մտեան դիւանագիտութիւնը արտաքին
թէ ներքին անլուծելի խառնակու-
թիւններ յառաջ բերելու վտանգին
ինքզինքը կենթարկէ:

Ենթադրելով որ թշնամանքները
սկսէին, չտեսնելի՞ր որ Սերպիա կամ
Թունաստան, մէկ կամ միւս կողմէ,
հարկաւորապէս խառնակութեան մէջ
պիտի քշուէին: Կրնա՞ն կարծել թէ
եւրոպան պիտի թողուր որ կրկնուէր
աւելի լայն տարածութեան մը վրայ
ու ալ աւելի շանր պարագաներու մէջ
Թունաստանի ու Սուլթանի միջեւ
տեղի ունեցած այն անհաւասար մե-
նամարտին գալթակցութիւնը, որ
Հայաստանի գործերուն մէջ եւրոպա-
կան միաբանութեան սնանկութեանը
թէ՛ պսակումը եղաւ եւ թէ՛ պատու-
հասը:

Բոլոր այս հարցերը կը յաճախեն

ամէն անոնց մտքերը, որոնք կարող են Արեւելքի մէջ կացութեան ծանրութիւնը չափել: Պիտի սիրէինք համոզուիլ թէ պաշտօնական դիւանագիտութիւնը իրապէս այս վտանքներուն գիտակցութիւնը ունի ու կը պատրաստուի անոնց առաջը առնել պատշաճ ու բաւարար գործունէութեան ծրագրով մը: Առանց անհանգստութեան չէր որ տեսանք թէ Կոստա Լամատորֆի ճամբորդութիւնը, փոխանակ արագօրէն ազդու լուծումներու յանգեալ, իբր արգելք կուենար խարխալութեան ու նախնական բանակցութեանց նոր շրջան մը բանալ:

Այսօր կը հասկնանք միանգամայն թէ Ապտիւլ Զամիտի մօտ ըլլալիք դիմումը պիտի ընեն միայն երկու պետութիւններ, Աւստրո-Հունգարիա եւ Ռուսիա, ու Սուլթանին անոնց խորհրդէր տալիք բարենորոգումները չարքի մակերեսին միայն կը վերաբերին:

Իրաւ է թէ, դժբախտաբար, խնդրոյն ներքին զօրութեան թիւներէն դուրս կարգ մը պետութեանց տրամադրութիւնները կը շարունակեն խաղաղութեան յառաջդիմութեան դատին վնասել, երբ միւս կողմէ կը ծառայեն բռնակալութեան ու անիշխանականութեան դատին:

Դեղին Գրքի վերաբերութեամբ կարգ մը գերման կիսապաշտօն թերթերուն սրամիտ հեղինակները, անոնց չնորայից, մարդավար ու նրբամիտ ծագները ընդդէմ Ֆրանսայի դերին ու հարստահարեալ ժողովուրդներու դատը չը լքելու համար հանրապետական կառավարութեան հաստատ որդումին—որպէս զի Սուլթանին բարեկամութեանը, չնորհեալ ու ապարանքներուն արժանանան, այս բոլորը շատ մը զէջ տրամադրութիւններ երկու կողմէ:

Կըմբոստի թէ անհաճոյ պիտի ըլլար հետեւիլ գերմանացի քաղաքականութեան մը, որուն ինքնամօլ իրապաշտութիւնը կը զոհէ ամենէն նուիրական պարտաւորութիւնները—տարօրինակապէս ծանրակշիւ բարեկամութեան մը ցած օգուտներուն:

Այս բաները բաւական ծանր պատ-

ճառներ չեն որպէս զի այնքան վերէն ու ծաղրելու ձեւով վերաբերում մը ունենալին նախարարի մը նկատմամբ, որուն միակ բաղձանքն եղած է գործակցիլ խաղաղութեան պահպանումին ու դժբաղդ ժողովուրդներու վիճակին բարեփոխումին:

ՊԱՏ. Կ. ԹՈՒՄԱՅԵԱՆԻ ԳՈՐԾԸ

Վեհ. Հայրապետի դիւանապետը Տ. Կորիւն վարդապետ Նուր-Դարի ուղղած, Յունուար 20 թիւ մէկ նամակովը պաշտօնապէս ի յայտ կը բերէ կարգ մը մանրամասնութիւններ Պատ. Թումայեանի եւ որբերու խնդրոյն մասին, որ վերջերք բոլոր հայ մամուլին մէջ արձագանգ գտաւ: Մենք անօգուտ չենք տեսներ այդ նամակին հետեւը բաւական մասերը հոս արտատպել:

Անցեալ Օգոստոս ամսոյն Վեհ. Հայրապետին կը ներկայանայ Մարտիրոս Փիրանեան անունով մէկը: Իր ձեռքը ունենալով Պատ. Թումայեանի յայտարարութիւնը, որուն երեք երեսը անգլիերէն եւ մէկը հայերէն տպագրուած էր այսպէս:

«Հինգ տարիներէ ի վեր Լոնդոնում հայկական որբանոց է հաստատուած, որտեղ եւ անգլիացի մարդասէրներին նպաստներով կը պահուին եւ կը դաստիարակուին հայ որբեր: Եւ թէ նոյն հայ որբերու ճանապարհածախսն ալ նոյն անգլիացի բարեբարներէն հաւաքել անպատեհ բան մըն է, կառավարութիւն, որ որբերի ճանապարհածախսը հայ բարեբարներ հաւաքին, եւ թէ Պ. Մ. Փիրանեան որբանոցի կողմէն կարգուած է Պարսկաստան եւ Ռուսաստան ապաւինած խեղճ եւ կարօտ հայ որբերէն արժանաւորներու եւ խոստմնալիցներու ընտրութիւն մը ընելով հետը բերելու: Արտօնեալ է նաեւ ճանապարհին հանդիպած տեղերը հայ բարեբարներու գիմելով այս ճանապարհածախսին համար զբաւական ոգնութիւն մը ընդունել յանուն որբանոցիս, որուն փոխարէն իր ստորագրութեամբ, յայտ որբանոցիս կնիքովը գործուած ստացագրքեր պիտի

տայ: 20 Օգոստոս 1902 թ. Կ. Թումայեան»:

«Յիշեալ յայտարարութեան մի երեսին տպուած է Պ. Թումայեանի տիկնոջ պատկերը, ներքեւ գրուած անգլիերէն Մասալ Թումայեան, միւս երեսում Պ. Թումայեանի պատկերն է տպուած թուրքական բանտում, երկու ձեռքերը գրած կոճղներին մէջ, Վիզը, ոտքերը շղթայուած խոշոր շղթաներով, ինքը նստած եւ առջեւը գրուած մի կտորած խեցի ջրի աման եւ ներքեւ գրած՝ Բրոքլիուս Թումայեան: Իսկ երրորդ երեսում հինգ հատ փոքրիկ 12—14 տարեկան տղայոց պատկերներ, տարբեր տարազներով, իրեւ որբանոցի սաներ, ներքեւ գրուած անգլիերէն՝ Սուլ օլ Վի Արմենիէն օլ քի Հօւլ:

«Պ. Փիրանեան մատուցանելով Վեհ. Հայրապետին յիշեալ յայտարարութիւնը, խնդրում է Պ. Թումայեանի կողմից յանձնել իրեն Ս. Էջմիածնում գտնուած որբերից մի քանիսը Լոնդոն տանելու, որտեղ նրանք պիտի խնամուին, դաստիարակուին եւ ապագային հայրենիքին ծառայող օգտակար մարդիկ լինին:

«Ճշմարիտ որ 90 թուականից էլ առաջ Պ. Թումայեանի գործունէութիւնը, նրա բանտարկութիւնն եւ տանջանքները թուրքական բանտում, նրա մահուան դատաւճիռը շատ շատերին յայտնի լինելով եւ նոյնիսկ Ն. Սրբութեան ծանօթ, տակաւին Պոլիս եւ Երուսաղէմ գտնուած միջոցին, ոչ մի տարակոյս չէր կարող լինել, թէ Պ. Թումայեանը կարող է այդպիսի մի անօրինակ քայլ անել, եւ այնքան փշաւալ, ապականուել հոգով եւ զգացմունքով, որ նա իր ապրուստի միջոց ընտելէր հայ անմեղ որբերի կեանքը եւ գոյութիւնը»:

Այս տողերէն վերջ Տ. Կորիւն վրդ. մանրամասն կը պատմէ որբերու խնդիրը, զոր մենք հետեւեալ կերպով կ'ամփոփենք:

Փիրանեան Ն. Սրբութեան հաճութիւնը ստանալով Պարսկաստան կանցնի եւ հոնկէ ալ որբեր կը հաւաքէ ու կը դառնայ Վաղարշապատ իր հաւաքած ու թը որբերէն զատ վեց որբեր սը:

Էջմիածնէն կ'առնէ, որոնց համար նոր հագուստներ, ճերմակեղէն, գլխարկ, կօշիկ եւ 50 րուպլի ճանապարհածախս կը տրուին Վեհարանէն: Նաեւ օրհնութեան կոնգակ մը եւ վկայագիր մը կը յանձնուի Թումայեանի անունով: Որբերէն մէկը Ալէքսանդրիաքով կը փախչի, ծնողքին հետ վերջին անգամ մը տեսակցիլ իրեն արգիլուելուն պատճառաւ:

Փիրանեան որբերուն հետ Էջմիածնէն կը մեկնի Վաղարշապատ, Ռոստով, Վիէննա, Զուրիգերիա մինչեւ Բարիդ, միշտ ճամբան ճանապարհածախս հանգանակելով հայերէն: Բարիդ ալ կը փորձէ հանգանակութիւն ընել, բայց վերջապէս օձիքը ձեռք կուտայ: Տեղւոյն հայերէն հաստատելով թէ Թումայեան իր նախկին որբերը ցրուած է, զանոնք անգլիացիներու սպասարկութեան տակով, կը համոզեն նոր րբերը որ չիթեան Փիրանեանի հետ ու զանոնք Տ. Էջմիածնէն պաշտպանութեան կը յանձնեն, ընդ հսկողութեամբ Տ. Վաղարշապատէ քահանայի:

Այս դէպքին վրայ երկու կողմէ հեռագիրներ կը տեղան Ս. Կաթողիկոսին: Միւս կողմէ Պատ. Թումայեան Բարիդ երթալով զատարանի կը դիմէ ու ետ կը պահանջէ կամ որբերը եւ կամ 7,000 Ֆրանք անոնց ճանապարհածախսը: Դատարանը որբերը առժամապէս Տ. Վաղարշապատէ Հօր կը յանձնէ, մինչեւ որ Վեհ. Հայրապետին հրահանգ ստացուի: Վերջապէս Էջմիածին տեղացի շումակներուն ու հետագիրներուն վրայ, որոնք Թումայեանի շահագործութիւնը եւ որբանոցի գոյութիւնը չուենալը կը պատմեն, Վեհ. Հայրապետը անմիջապէս կոնգակ մը կը գրէ Բարեղու Վաղարշապատէ քահանային եւ կը հրամայէ «նախ յետ ստանալ զկոնգակն Միւր տուեալ յանուն Պ. Թումայեանի վրայն որբոցն, նոյնպէս եւ զվկայական Դիւանի Մեքոյ տուեալ առ Պ. Փիրան եւ երկրորդ առնել անմիջապէս ընդ հովանեաւ ձեր զորքս յանձնեալ ի Մէնջ Պ. Փիրանեանի եւ թողուլ ընդ հոգածութեամբ Պ. Էջմիածնէն»:

Այս հայրապետական հրամանն ար-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (52)

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

ՄԱՍՆ ԵՐՐԻՐԻ

ՍԵՐՈՐ ԱՂԱ

Սերոր աղայէն ազատուած էր ոչ թէ յեղափոխականը, այլ թշուառ գեղացին:

Մէկ խօսքով աներեւոյթ ձեռքը Սերոր աղայի կեանքը վերջացուցած էր:

ԲԱՆՏԻՆ ՀԻՐԵՆԸ

Ոստիկանութիւնը գործի վրայ էր:

Բանտը լեցուած էր անմեղ հայերով, որոնք կը տառապէին, առանց պատճառի եւ առանց քննութեան մը:

Այդ թշուառ հայերուն հետ կը գտնուէր մեր ծանօթ Պատրիկը, որ Արճակայ լճին քով, գիշերային կռուի մը մէջ, զարնուած էր, ու այդ պատճառաւ յանձնուած էր վաշտ մը ձիաւոր ոստիկաններու ձեռքը:

Պատրիկ ծանրապէս վերաւորուած ըլլալով, նախ բժշկական դարմանի մը ձգուած էր, յետոյ երբ քիչ մը ապաքինեցաւ, բանտը նետուեցաւ:

Երեք ամիսէ ի վեր բանտը կը գտնուէր:

Իրեկեան մը բանտապահին երիտասարդ մը մօտեցաւ եւ խնդրեց որ Պատրիկի քովը տանի գինքը:

— Պատրիկ... թոթովեց բանտապահը զարմացած:

— Այո՛... չեչեռեց երիտասարդը ու կամացուկ մը անոր ձեռքին մէջ դնելն ոսկի մը գլուխը:

Բանտապահը գեղին ոսկիի չլացումէն՝ երկար բարակ չը քննեց թէ ո՞վ էր ինքը, ի՞նչ յարաբերութիւն ունէր անոնի Գոմիթաճիքի մը հետ եւ ի՞նչ պիտի խօսէր: Ընդհակառակը քծնող չունի մը համակերպութեամբ երիտասարդին առջեւ ինկաւ ու առաջնորդեց զանի բանտին խորը նետուած կարսնաւորին քով:

Ներսը հաղիւ աղօտ լոյս մը կը պլպլար:

— Կը տեսնե՞ս, ի՞նչնախ, տէ՛ր անկիւնը նստած է, մըմնջեց բանտապահը:

— Տեսա՛յ... թոթովեց երիտասարդը ու Պատրիկին մօտեցաւ:

Պատրիկ իրեն մօտեցող երիտասարդին երեսը նայեցաւ, անոր վայելուչ հագուստին նայեցաւ, անոր հասակին ու ամբողջ կերպարանքին նայեցաւ... Բայց չկրցաւ ճանչել:

— Պատրիկ... մըմնջեց երիտասարդը կաւնաւորին ձեռքը ընկնելով: Միթէ չը ճանչեցի՞ր զիս... Օ՛հ, ձայնէն ու լեզուէն ներգայնակութեան նէն ամեն բան հասկցաւ... Եկողը Լալիւարն էր:

— Լալիւար... դու՛ն ես, հարցուց Պատրիկ խղճուած ձայնով մը:

— Եկայ որ յայտնեմ քեզի վաղուան մեր ծրագրերը նկատել տուաւ մանկամարդ աղջիկը՝ որ իր էրկ մարդու զգեստին մէջ սքանչելի կերպով ծպտուած էր:

— Մըղիք... բացառանչեց Պատրիկ հոգին խղճուած եղանակով մը:

— Այո... նպատակին է բանտին յետնակողը գտնուած փայտաշէն տունը կրակի տալ ու ձեռք տանելով ազատել, մըմնջեց Լալիւար:

— Պիտի յաջողի՞ր:

— Յաջողութիւնն ապահովուած է, միայն թէ զուք աչալուրջ կենալու էք որ ժամանակին ընդձեռնած առիթը չփախցունէք ձեռքէ:

Պատրիկ իր կրակոտ աչքերը մանկամարդ աղջկան վրայ սեւեռեց ու զողջողով հարցուց:

— Բայց դուն ի՞նչպէս մինչեւ հոս եկար:

— Ե՛ս:

— Այո՛, դուն:

— Այդ մասին ի՞նչ կայ զարմանալու: Ահա՛ կըտրեցիր մազերդ... լմնցաւ զնայ:

— Կտրեցի՞ր մազերդ:

— Կտրեցի:

— Գեղեցիկ մազերդ:

Մանկամարդ աղջիկը ժպտեցաւ:

— Միթէ՞ գեղեցիկ մազեր ունէի:

— Այո՛... թոթովեց Պատրիկ՝ ու սիրտաւոր նայուածք մը նետեց իր դէմ գտնուող հրեշտակին վրայ, որուն սկրք խորունկ ու անուշ սէր մը կը դառնար իր սրտին մէջ:

Մանկամարդ աղջիկը խօսքը վերջացուց ու մեկնեցաւ:

ձակուկէն վերջ, Պ. Թումանյան կը յաջողի Լոնդոնի Հայ. Միացեալ Ընկերութեան նախագահին եւ Եւրոպայի առաջնորդ Գեր. Ի. Թիւմանին իրեն նպատակաւ նամակներ գրել տալ վեհ. Հայրապետին. բայց ի դուրս Հայրապետը ստացուած բազմաթիւ նամակները քննելով, երկրորդ անգամ եւս իր վերի հրամանը կը կրկնէ, նաեւ նոյնը կը գրելու ցանէ Պոլսոյ Պատրիարքին:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսահայ թերթերէ կիմանանք թէ Օրմանեան պատրիարքը, որ իր վրայ հղած սպանութեան ծառայութիւնը անկողնէ իր բնակարանէն դուրս չէր ելներ, բոլորովին խաբարէն ըլլալով, իր պաշտօնին վերստին ձեռնարկած է:

— Պատրիարքարանէն հեռազրով ծանուցուած է Կիլիկիոյ իւր ընտիր կաթողիկոս Տ. Սահակ Կալիսկի թէ Պատրիարքարանի կաթ. հրահրակը Յարութիւն Գաւառի մասին ճամբայ ելած է գէպի Երուսաղէմ, իր հետ տանելով նաեւ կաթողիկոսական ընտրութիւնը վաւերացնող կայսերական Պիտարը ու կաթողիկոսին շնորհուած պատուանշանը:

— Սոքրանկալ կիմանայ թէ Ս. Հայրապետը մտադրած է Աւոր. պատական գրկել Մայր Աթոռոյ Միաբաններէն Տ. Բարթողիմէոս Կալիսկոպոսը, որ ընդունակ է պաշտօն վարելու եւ վաւերութիւն մէջը անգործ ժամանակ կանգնէ. Ս. Կաթողիկոսին այս մտադրութիւնը յառաջ եկեր է անկից որ Աւոր. պատական արդի առաջնորդը Տ. Սուրբատեան վ. իր վիճակէն Կորս Էջմիածնի կողմերը կը գնդերի, թէպէտ անոր պաշտօնավարութեան մասին մինչեւ հիմա զգոհու-

թիւն չէ լուծած, ինչպէս ուրիշ անգամներ պատահած է. հետեւաբար փոփոխութեան բուն նպատակը անծանօթ կը մնայ:

— Էջմիածնի արդի կացութեան վրայ նոյն թերթը կը գրէ.

«Հաւաստի ոգիւրներէ կը հաս. կըցուի որ, նոյն իսկ Էջմիածնի շրջանակին մէջ շատ փոփոխութեան պէտքեր կան. Տարին սկսած է արդէն ու վաւերութիւն ճէն չէ պատրաստուած. որուն պէտք ալ չկայ կրօն, քանի որ անցեալ տարի պիտոճէն դուրս շատ ծախքեր եղեր են եւ ասոր հակառակ՝ միաբանները օրինաւոր անունը չեն ստներ եւ շատերը սը. նունդի նուազութենէն կը հեռանան եւ ամէն ամառ շատերը հանրային շուրերը կերթան առողջանալու համար: Զեմարանի աշակերտներն ալ նոյն անկարող ու տկար վիճակին մէջ են, եւ միաբաններէ շատերը իրենց ամսականներով դուրսէն հաց գնելու ստիպուել են: Նոր տնտես մը նշանակուել է, Երեւանի թեմական դպրոցէն ընթացողները որ սարկաւագ ալ ձեռնագրուել է: Այստնտեսը աւելորդ պաշտօնեաներ տեսնել է խոհանոցին եւ փռատան մէջ. բայց վստիկան վարչութիւնը հակառակ է անոնց, եւ այդ վարչութեան անգամներն են որ Երեւան երթալով պէտքերը կը գրեն, այն ալ չուտուելիք բաներ: Նոր տնտեսը օրական մէկ քանի հարիւր հացի ալ խորոմ հաներ է: Միաբանները կըսեն թէ ասիկէ 10—12 տարի առաջ ծախքերը աւելի քիչ էին, մինչ սնունդը անհատական աւելի լաւ էր քան հիմա: Վաճառ հետզհետէ կը լեցուի պարսպ վարդապետներով եւ ամենքն ալ թոշակ կառնեն: Ամե-

նէն վերջը կը խնդրէ թէ Կորիւն վարդապետ այս օրերս Պատրիարքարան գիր մը զրկեր է, որով կը բողոքէ իրեն ու խորէն խորհեանք վերագրուած զեղծումներուն դէմ: Ենթադրելով իսկ որ ամեն կողմէն շնչուած այս տեղեկութիւնները անհիշելի ըլլան, աւելի լաւ չէ՞ր ըլլար որ փոխանակ այդ տեսակ օգտալի հերքումներ զրկելու, վա. նական այս անկանոն վիճակին դարձան մը խորհէին այսքան մարդիկ»:

— Հայաստանի ու Մակեդոնիոյ ինպատ կազմակերպուած մեծ միջոցով որ Տէգուրէլ Տը Գոնսթան երեսփոխանին նախագահութեամբ փետրուար 12ին տեղի պիտի ունենար Բարիզի մէջ՝ յետաձգուած է. թիւս իր վերջին թուով կը ծանուցանէ թէ կազմակերպիչ յանձնախումբը հարկադրուել է միջոցով յետաձգել, նկատելով որ միջոցին ներկայ գտնուելու համար տոմսակ պահանջներուն թիւը կարծուած էն եթէ յետագային աւելի է. այն պէս որ վարձուած սրահը, ուր գումարուած տեղի պիտի ունենար, այս ստուար բազմութիւնը չպիտի կրնար պարունակել:

Օրօտի վերջին թիւէն կիմանանք թէ այս յետաձգուած միջոցով կիրակի օրը տեղի ունեցած է. մանրամասնութիւնները տակաւին մեզի չեն հասած:

— Ռուս-թուրք սահմանագլխի հայ գաղթականները նպատակաւոր երկու համար վառնայի մէջ կազմուած Յանձնախումբը ասիկէ առաջ Էջմիածնի Ս. Կաթողիկոսին նամակով մը հրահանգ խնդրած էր թէ հանգանակուած դրամները ինչ միջոցաւ իր նպատակին ուղարկել պատշաճ է. Յանուն ն.

վեհափառութեան, Էջմիածնի դիւանապետը Տ. Կորիւն վարդապետ տեղւոյ Յանձնախումբին պաշտօնապէս կիմացնէ թէ հանգանակուած գումարը զրկուելու է Կարսի առաջնորդ Տ. Կիրեղ վ. Կիրեղեանի:

Աւելցնենք նաեւ թէ տեղւոյ Յանձնախումբը ընդ փոյթ իր գործառնութեանցը հաշիւները հանրութեան պիտի ներկայացնէ:

ԻՐԱՆԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Պ. Գեորգ. Գանիրե. — Ձեր թերթերը շարունակաբար կը զրկուին զարմանալի է որ չէք ստանար:

— Տ. Կ. Սահակ. Բազարճը. — Այս քանի անգամ է որ կը խոստանաք ու չէք կատարել: Կապանք չուտ:

— Տ. Զ. Զ. Յոգզան. — Ձեր որոշ ստորագրութիւնը առանց ունենալու մեր քով, չենք հրատարակել:

— Տ. Մ. Յ. Զախնի. — Ստացանք 7 ֆրանք:

— Տ. Ս. Մ. Կեօյի. գիւղ. — Ստացանք 6 ֆրանք:

— Տ. Ս. Թադէոս Սեւպի. — Ստացանք 15 ֆրանք:

— Տ. Լ. Մեսրոպ. Բարի. — Ստացանք 7 ֆրանք:

Ա. Զ. Դ.

Պոլսոյ Ազգ. Կեդր. վարժարանի ընթացաւարաններէն երիտասարդ ուսուցիչ մը պատրաստ է ներկայ տարեւորման համար բացառաբար ուսուցչի պէտք ունեցող պուլկարանայ եւ արտասահմանեան Ազգ. վարժարաններու մէջ պաշտօնավարելու եւ կամ մայրենի լեզուի, ֆրանսերէնի, թուրքերէնի թեան եւ բնական գիտութեանց մասնակի դասաւանդութիւններ ստանձնել համեստ պայմանով, Դիմել խմբագրութեանս:

Պատրիկ երկար ատեն անոր կողմէն նայեցաւ ու յետոյ հառաչեց.

— Ինչո՞ւ Լալիզար, կը սիրէ՞ կը սիրէ՞ գիւս... ասիկա գիտեմ: Այդ պատճառաւ իր ոսկեգոյն մազերը կտրել տուած է որ չհաջցուի: Այս, իր սիրտը լեցուած է... իր հոգին կը վառի... Մէկ կողմէն հայրենեաց սէրը, իսկ միւս կողմէն՝ իմ սէրս կաշկանկած են զինքը:

Այսպէս, Պատրիկ ամբողջ գիշերը մտածելով ու երեւակայելով անցուց: Հետեւեալ առաւօտը բանտապահին առաջնորդութեամբ ոստիկանապետին ներկայացաւ:

Ոստիկանապետը Ծաքիւր բաշայի կարգած պաշտօնեան էր, որ իր հայատեաց նկարագրով ծանօթ էր բոլոր քաղաքացիներուն:

Հաղիւ քառասունի մօտ տարիք մը ունէր: Կերպարանը նիհար ու ոսկոր կտրած էր: Ծնոտին ամբողջութիւնը ծածկուած էր ցարցրուած մօրուքով մը, որուն մէջ ճեմակ մազեր կերեւային: Աչքերը դուրս ցցուած էին, իսկ կոպերը բոլորովին ուռած ու արիւնխուած էին: Խոշոր ու սղեղ քիթ մը կար վրան, որուն ծակերը մեծ ու անաւոր էին: Պիւնը ու կէս մասը խոնցած ու մնացած մասը թափուելու երեւոյթ մը ցոյց կուտային: Ծակատը կիւսուած ու ամբողջ էր:

Պատրիկ այդ գարշապա մարդուն դէմը կեցաւ ու սպասեց:

Ոստիկանապետը որ պաշտօնատան մէջ գտնուած լայն սեղանի մը քով կը նստէր, պահ մը Պատրիկին երեսը նայեցաւ եւ յետոյ սեղանին վրայ դրած սեղանագիրը կարդաց ինքնիւրեն: Երբ ըն-

թերցումը վերջացուց, ան ատեն խաղտ ու խղ-խղուռ ձայնով մը ըսաւ.

— Եթէ թշուառակա՞ն, բաւական չէ՞ այս կատակերգութիւնը... Ի՞նչ է ձեր միտքը... Ի՞նչ կուզէք: Կառավարութիւնը շարունակ ձեզմով պիտի զբաղի: Ըսէ՛ք ի՞նչ է այս խայտառակութիւնը... մինչեւ ո՞ւր պիտի հասնի ասոր վերջը...

Պատրիկ անզրգուելի մնաց ու չը պատասխանեց: Կարծես թէ չէր լսեր ոստիկանապետին ըսածները. չէր հասկնար:

Ոստիկանապետը բարկութեամբ մը ոտքի ելաւ ու՝ անկիւն մը դրած վեց հարուած մը ու հրացան մը կային, զանոնք սեղանին վրայ դնելով հարցուց.

— Բո՞ւկը ե՞ն ասոնք:

— Հրացանն ու վեց-հարուածը, նկատել տուաւ Պատրիկ հարցական ձեւով մը:

— Այո՞:

— Իմա ե՞ն:

— Ուսկի՞ց ձեռքդ անցուցիր:

— Ռուսաստանէն:

— Ի՞նչ բանի համար:

— Անձնապաշտպանութեան համար:

— Անձը պաշտպանուած չէ՞:

— Ամենեւի՛ն:

— Ի՞նչպէս արեւելին... միթէ՞ կառավարութիւնը չպաշտպանէր քեզ:

— Թերեւս... բայց քուրտը կառավարութեան ալ մոխի չընէր:

— Ասոնք քուրտերուն համար էին:

— Բնական է:

— Եթէ քուրտերուն համար էին, ի՞նչու համար սպաննեցիք կառավարութեան գինուորները:

— Կառավարութեան գինուորները չէին սպաններ, եթէ իմ դէմը սուր չբարձրացնէին:

— Խիտ լաւ կըսեն թէ դուք մեծ քանակութեամբ զէնքեր փոխադրած էք երկրին անծանօթ մասերու մէջ միամիտ հայերուն բաժնելու համար. իրա՞ւ է:

— Միամիտ հայը զէնքի պէտք կուենանո՞յ:

— Ե՛ն, կը խաբէք զինքը:

— Ո՛չ, աւելի ճիշդ կըլլար, երբ ըսէիք թէ զէնքերը կը բաժնուին գիտակից ու գաղափարական եղող հայուն մէջ:

— Գիտակից հայը ձեզ նման սրիկաներու հետ դուր չունի:

— Դանի որ այդպէս է, միամիտ հայէն ալ մի վախճաք: Անասունն անկից աւելի աղէկ է:

Ոստիկանապետը Պատրիկի խօսքերը մէկիկ մէկիկ գրի առնելէն ետքը մեկնեցաւ: Օրը կամաց կամաց իրիկուն եղած էր:

Պատրիկ մէկ աչքը դէպինեղ շուտաւարտ յարած, իսկ միւս աչքը բանտին դուռը սեւեցած, կըսպասէր սրտադողով մը:

Ժամերը կը սահէին...

Դիւերուն ճովանդ կը զարնէր.

Մէկ... երկու... երեք... չորս:

Այդ պահուն յանկարծ ձայն մը լսուեցաւ... յետոյ վիշտով մը... աղաղակ մը եւ զրդիւն մը փրկաւ...

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պատրիարք Օրմանեան ճերիհէ-
սինտէն շիֆահապ օլմուշ օլարադ
թէքորար իշֆայի մէմուրիյէթ Ի-
չիւն Պատրիարքարանա կիթմիշ
օլմասընտան մաստա, էվվէլքի էիւն
Երուզ սէրայընա եինէ կիտէ-
րէք Սուլթանըն հուզըրընա տախի
գապու օլընմըշ տըր, Սուլթան
պու մինասիպէթլէ Օրմանեան
թէէսիւֆիին պէյան իթմիշ տիր,
Պատրիարք իսէ շու ֆըրսաթ-
տան պիլ, իսթիֆատէ, էրմէնի
միլլէթին զաթը շահանէյէ հըս-
սիյաթը սատրգանէսին պէյանլէ
պուլտան էվվէլ սուտուր իտէն Ի-
րատէլէրին իճրա օլընմասընը իս-
թիւրհամ էյլէտի:

Սուլթան իսէ պու պապտա,
Սատըրազամա էմիրլէր վէրմէք
վաա իթտի:

Շու վահի վատար իլէ Օրման-
եան պիր տէֆա տահա ալտանմըշ
օլմադ տըր, վէ պէլքի տէ
Սուլթան անա եէնի պիր ուպու-
տիյէթնամէ իմզալատուպ, Շարք
մէսէլէսին շու աթէշի սըրա
սընտա էրմէմի միլլէթին իթիւր
հիւքիւմէթին տէն մէմուրիյէթին
էվվէլքալա կէսթէրմէք իսթէյէ-
ճէք, Հալպու քի օ' կիպի օլմուշպազ-
լըզարըն գատըր ու գըյմէթի զայ-
րը գալմաճըշ վէ քիմսէ էնտինտէ
էհէմմիյէթի օլմալաճադ իսէտէ,
Օրմանեանըն օ' եօլտա եէնի պիր
խաթա իշլէմէսի միլլէթին քէն-
տիսինտէն գաթիէն նէֆրէթ իթ-
մէսինէ սօն պիր սէպէպ օլմադ
տըր:

— Տընէվիկիլէ պէյանը իւզրէ,
Բուս վէ Աստուրիա էլիլէրի ճուճա
հիւնիւ Պապը Ալիյէ պիր նօթա-
վէրմիշլէր, իշպու նօթատա զանն
օլընտըրընտան տահա աղըր թէք-
լիֆլէր միւնտէրիճ իմիշ:

— Սթիւպտէ իմամար ճամի-
լէրտէ խրիսթիանլարը գըրմադ
իշիւն վազ իտէրլէր իմիշ, Շէհ-
րին իշիւնտէ իսլամ հաշարաթը
տօլմուշ օլուպ, խրիսթիանլար
տէհէլթտէ պուլընթըրլար:

— Բօլիթիլէ Գօրէսթօլտանըն
պէյանընա նազարէն, ինկիլթէրա
Մաքէթնիւ մէսէլէսին հալիւնի
բուս վէ Աստուրիա տէօվլէթլէրին
րէյինէ պըրադմըշ վէ պուլարըն
էլէ ալաճադ թէտպիլէրինէ կէսեա
էմիլիյէթի քեամիլէսի օլտըրըն
պիլտիւրմիշ իմիշ:

Հարպիէ հաղըրըն

Պապը Ալի էնվաի նէշ իաթ-
լարլէ վէ էվրօրատա պուլընտէն էլ-
իլէրինն վասթիւսըն իլէ մուհա-
րէպէ հաղըրընտա պուլընտը-
ղընա տաիր հէր թարաֆտան
թաստիգ օլընտէն հալատիսլէրի
թէքըիպ իտէյօր, Հալպու քի, գօն-
սօլօղարըն վէ թէլէկրաֆ աճէնթ:

լէրին վէրտիլէրի մալիւմաթ Ի-
քինճի վէ իւշիւնճի օրտուլար Ի-
չիւն եէնի րէտիֆ թապուրլարը
թէէլքի օլընտըրըն պիլտիւրիյօր-
լար:

Սէրասքէր գաբուսընտա Բիզա
բաշանըն իրիսթի ալթընտա
հէր կիւն եէնի հաղըրընտա Ի-
չիւն միւլքէթէրլէր օլընթըր, էթ-
հէմ բաշա, Բէնօֆ բաշա, էտիր-
նէ գօմաշտանը Արիֆ բաշա վէ
Սէլանիք գօմաշտանը խալի բա-
շա Երուզ իլէ հէր տադիթա
մուխապէրէտէ պուլընթըրլար: Ա-
նատուրտան 128 թապուր րէտիֆ
նազլ օլընտաղը տախի սէօլէնի-
լիյօր, Պապը Ալի տէյօր, «Ենի
թօրլանան ասքէրլէր էսքիլէրինն
եէրինէ գալիմ օլուպ, էսքիլէր
մէմլէթլէրինն եօլլանընտադ-
լար»: Հալպու քի էսքիլէրտէ եէնի-
սիտէ էլան սիւհա ալթընտա թու-
թուլըրլար:

Թիւրքիանըն շու հաղըրընտա
մուգապիլ Բուսիա տախի իգթի-
գասըն իճրա իտէյօր, Բէթրս-
պուրկտան պիւթիւն րէտիֆ գա-
պիլթէրինն վէրիլէն էմիր իւզրէ,
պուլար իքինճի էմիր ալմալարըն,
տա 24 սահաթա գատար մահէլի
մէմուրիյէթլէրինտէ հաղըր պու-
լընտաղլար:

ՏԱԽԻԼԻԹԷ

Սապըգ հէլէթի վիւքէլա ազա-
լարընտան Մ. Մ. Բատուրալօֆ,
Երուզնէֆ, Թանէֆ, վէ թէ-
նէֆ ալէհինէ աշլըմըշ օլան տա-
վանըն մուհաքէմէսի բազար էր-
թէսի կիւնիւ Սօֆիստա պաշլա-
մըշ տըր, իշպու տալա իշիւն
մահէմէթի ֆէվգէլատէ թէէքիլ
օլընթըշ օլուպ, պիւթիւն Պուլկա-
րիանըն պէտալէթ վէ իսթինաֆ
մահէմէթլէրին րէյիսլէրի ազա սլ-
ֆաթը իլէ պուլընտադ, մահէմէթի
թէմիլք րէյիսի Մ. Բալլուֆ րէ-
յասէթ իտէճէք տիր:

— Պէլի. Բրէնսին թահթը րէ-
յասէթինտէ թօրլանմըշ օլան վիւ-
քէլա մէմլիսի պիլ միւլքէրէ,
Պուլկարիատա պուլընտան Մաքէ-
թնիւ գօմիթէրլէրին լազվ օլըն-
սասընը թահթը գարարա ալտը-
վէ պու գարար մուհէպիհէ հիւ-
քիւմէթ տէր հալ գօմիթէ տաիրէ-
լէրին գաբալուպ, մէօհիւրլէտի
վէ րէյիսլէրտէն Մ. Մ. Միխայ-
լօվսքի, Ջօնէվ, Սթանէվ վէ
տիկէր պաղըրլար թէվգըֆ օլըն-
տըրլար:

Պուլկար հիւքիւմէթինն իշպու
հարէքէթի կէսեա թիւքիանըն
պիր նօթասը իւզէրինէ վուգուլա
կէլմիշ տիյէլէր պուլընտը իսէտէ,
պու շալէանըն ալ ու էստսը օլ-
մատըրը կիպի թիւք տէօվլէթի
օ' եօլտա պիր թալէպտէ տախի
պուլընտաղը տըր:

Պուլկարիա պու հարէքէթի իլէ
տէօվլէթլէրէ կէսթէրմիշ օլտուրթի
քէնտիսինն միւթէտալի վազիֆէ-
լէրի նօթա պէ նօթա իշֆա

իթմէկէ հաղըր վէ աղըրէքէ տիր-
վէ պուլտան պէօլլէ Մաքէթ-
նիատա զուհուրա կէլէճէք օլան
գարընթըրլար տօլարը քէնտիսի
մէսուլ թուլթուլաճա:

— Պիթ գաշ կիւնտէր պէրու-
շէհրիմիլտէ պուլուսան բօլքոֆիք
Եանքով բազար կիւնիւ թէվգըֆ
օլընտալ, բազար էրթէսի կիւնիւ
թահթ էլ հըֆք կէօնտէրիտի:
Մաքէթնիւ րէյիսլէրինտէն տի-
կէր պիր զաթ տախի ալնը սու-
րէթլէ Պալըրը մէնֆի կէօնտէ-
րիտի:

Պու թէգիլգաթըն սօնը պազա-
լըմ նէլէ միւնճէթի օլմադ տըր:

— Տէրտէսթ օլընտէն Մաքէթ-
նիա գօմիթէրլէրին րէյիսլէրինտէն
Մ. Միխայիլօվսքի Սօֆիստաքի
խանէսինտէ թէվգըֆ օլընթըշ,
մէնէրալ Ջօնէվ Տրէնօվալա կէօն-
տէրիմիշ, խրիսթի Սթանիլէվ
Պալըրա, կէօրկի Բէթրով Գա-
զանըրա կէօնտէրիմիշլէր վէ Սթա-
նիլէվ վէ Պաշինով սէրպէսթ պը-
րազըրմըշլար:

— Տալիլիէ նէգարէթի շէտիտ
էմիրլէր վէրուպ, Մաքէթնիւ
գօմիթէսի նամը իլէ բարա վէ Իանէ
թօրլալա, թէլաթրօ վէ սաիր
շէնիլլէր թէէքիլ իթմէք գաթիէն
եասադ իթմիշ, վէ գօմիթէ ազա-
լարընա եարտըմտա պուլընտէն մէ-
մուրլարըն, ալ օլընտաղլարըն
իթթար էլլէմիշ տիր:

ԻՆԿԻԼԻԹԷՐԱ ՎԷ ԹԻՐԻՐԻԱ

Շու սըրա ինկիլթէրա թիւք-
քիա իլէ խուսուսի մէսէլէթլէր
ուղարշաճադու տըր:

Արապիստան սահիլլէրինտէ Ա-
տէն ճիվարընտա ինկիլիզ հիւս-
լէսի ալթընտա պուլընտէն էյալէթ-
լէրին սինօրլարընը թալին իթմէք
պէհանէսի իլէ ինկիլիզլէր թիւք
հիւքիւմէթնտէն պաղըր աղազիլէր
զապթ իթմէք թէտպիլէրինտէ պու-
լընթըրլար: պու խուսուստա Պապը
Ալիյէ նօթալար վէրիյօրլար: Թիւք-
քիանըն շու թէլաշլը սըրասընտա
տօմուլտան պիր գըլ տահա գօ-
բարմադ ալլէրին խըտմէթ իտէ-
յօրլար: Փազաթ պէրիտէ ինսա-
նիլէթ վէ մէտէնիլէթ նօթթաի
նազարընտա տէրէօհտէ իթմիշ օլ-
տըրը Էրմէնիստան իսլահաթը Ի-
չիւն ինկիլթէրա էլան ճիտտի պիր
թէտպիլտէ պուլընտալար:

— Էվվէլքի նօթթօրմըզտա եազ-
աղըրմըզ իւզրէ, պիր ինկիլիզ
ղըրճըրըն Գըրմըզը տէնիլտէ
Թուլթմուշ օլտըրը գուրսանլարըն
թիւք հիւքիւմէթինն թէսլիմ օ-
լընտաղըն Պապը Ալի ինկիլիզլէր-
տէն թալէպլէ, Հօտէյտատա ան
լէրի մուհաքէմէ իթմէք իսթէյօր:
Ինկիլիզ գօնսօլօր աշլէրին Գա-
մարան առասընտա մուհաքէմէ ի-
տիլմէսինն թէլէպ էյլէտի:

Ֆ Ի Ր Ա Ն Ս Ա

Էրմէնիստան մէսէլէսինն Մա-
քէթնիւ մէսէլէսինտէն ալթըրմա

մադ վէ հէր իքի գըթալարըն իս-
լահաթընը թէէմին իթմէք իշիւն
Ֆրանսա հիւքիւմէթինն վէ տիկէր
պէօլիւք տէօվլէթլէրի մուհսիր
թէտպիլլէրէ տալէթ էյլէմէք մադ-
սէտի իլէ Բարիստէ կէլէն բէր-
շէնպէ կիւնիւ թէճէմմիւ օլընտադ
պէօլիւք իթմիշ իւշ կիւն սօն-
րալա թէլէթի օլմուշ տըր: Շու
հալտէ բազար կիւնիւ՝ Բարիլին
էն պէօլիւք սալօնլարընտան պիրին-
տէ «Թէլաթըր տ'Օ» տա թէճէմմիւ
իթմիշ օլմադ տըր: Պու պապտէ
ալընտադ թաֆսիլաթ ճուճա էր-
թէսի կիւնքի նօթթօրմըզտա միւն-
տէրիճ պուլընտաղ տըր:

ԹԻԱՊԱՐՏԸ

Թիապարտի Ա. հատորը զրկած ենք
մեր հետեւեալ գործակալներուն:
ուստի այդ խիստ հետաքրքրաշարժ ու
շահեկան գիրքը ստանալ փափաքող-
ները կրնան գրիմէլ:

Պարկազ	Տ. Արտաշէս Հարենցի
Ֆիլիպի	» Գ. Թիւթիւնեանի
Շումյա	» Ասլան Տօնիկեանի
Ռուսլոյ	» Սարգիս Մանուկեանի
»	» Է. Գալիլիէլեանի
Սօֆիա	» Ասատուր Մկրտիչեանի
Տօպրիշ	» Նիկողոս Սիսակեանի
Սիլիւսթի	» Յ. Սարգիսեանի
Սիլիւն	Տէր Վաղինակ Հօր
Պուրիշ	» Յովն. Փափազեանի
»	» Յովն. Պապեանեանի
Գոնսթանցա	» Սիսակ Մեղիքեանի
Կալազ	Տէր Ղեւոնդ Հօր
»	» Դրիգոր Յակոբեանի
Գուհիւրի	» Կ. Էրզնկազեանի
Սիլիւսթի	» Ս. Մարգարեանի
Պուրն	» Զ. Հայրենեանի խմբ.
Ֆիլիպի	» Կ. Մարութեանի
Ռուս	» Յակոբ Ֆրանքեանի
	176 Սաւուր Պրիճ

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԴԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՄ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. ունգամ
տպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ դնոյն
աժանութեանը կը պարունակէ սղ-
գային հին ու նոր խիստ շաւ. հը-
գեր: Գին 1 Ֆր.

ՆԷՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՆԸ,
Պուլկարիոյ ազատութիւնէն տալ
Պուլկար գիւղացիին Թուրքերէ կը-
րած տառապանքները ու անոնց իրա-
ու կացը կը պատկերացնէ: Շու հե-
տաքրքրական: Գին 50 ՍԱՆԻ.

ՀԱՅԵՆԻԻԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը
ճաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան:
Զեղչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքըրը տառալու համար
պէտք է գիմէլ Իրաւունքի խմբաւոր-
թեան, բօթի ճախը 10ակն
սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, կթէ ուրիշ
գիրքութիւններ պահելն, կ'չգործուի
նամակագրօշմ 10 0/0 զեղչով:

Одговорникъ Н. Драгулевъ

Меч. на Хр. Н. Войниковъ—Варна